տիւտուկեանի ու տուտուկեանի քանի մը ընկերներու հետ հարսանիքներուն կամ տօնական օրերուն իրենց ելոյթներով կը շէնցնէին մթնոլորտը: Այսպիսով, Սարգիս փնտռուած աշուղ դարձաւ՝ թէ՛ նուագելով եւ թէ՛ միաժամանակ երգեր ստեղծագործելով ու երգելով:

Աշուղ Սարգիսի համբաւը տարածուեցաւ նաեւ Թուրքերուն մէջ, որոնք սօսական օրերուն կը հրաւիրէին զայն՝ իր ընկերներով: Մահացաւ խոր ծերութեան մէջ:

Թորոս, աշուղ Սարգիսի զաւակը, Թոմարգայի Ս. Աստուածածին վանքին վարժարանը մտաւ, ուր իրրեւ ուսուցիչ ունեցաւ երաժշտագէտ եւ բանասէր Դանիէլ վարդապետ Բագուսեանը: Ուսումը աւարտելէն ետք ան Թալաս փոխադրուեցաւ, ուր Ս. Թորոս եկեղեցւոյ ղարպետ եւ Ազգային Նիւպետեան վարժարանին երաժշտութեան ուսուցիչը եղաւ: Ան յետոյ քահանայ ձեռնադրուեցաւ:

Աշուղ Սարգիս արուեստին շարունակողը եղաւ Կարապետ խորասանեան. վարպետ սրնգահար՝ ան մաս կազմեց Հայ եւ Թուրք թմբկահարներու խումբին, որոնք հայերու եւ Թուրքերու հարսանիքներուն, սոսական օրերուն եւ կառավարական յատուկ տօներուն կը նուագէին, կ'երգէին եւ կը խաղային:

ԵՂԻԱ ԲԱՐԱՂԱՄԵԱՆ

Խորասանեան գերդաստանին Բարաղամեան ճիւղին նահապետներէն Եղիա ծնած էր ժԸ. դարու վերջաւորութեան, Թոմարգայի Վերի թաղին մէջ: Նկարագիրով՝ արիասիրտ, առատածէտն եւ արտեպաշտ: Բազմանդամ նահապետական ընտանիք կազմելով՝ ան արտերու տէր եղաւ եւ անոնց բարիքներէն օգտուելով՝ բարեկեցիկ օճախի վերածեց իր տունը: Հոն ձեռքի, կալի շախատանքները հագիւ արտարած՝ ան իր քաղաքում ընտանիքով ընթացի հանելէն ետք բերքին մնացած մասը կը բաժնէր եկեղեցւոյ, վանքին եւ աղքատներուն: Իրրեւ նահապետական օճախ տէր՝ ան քեհիա կոչումին արժանացաւ:

Եղիա քեհիա, շնորհիւ թուրք պետական շրջանակներու ու քաղաքում ընտանիքով իր կապերուն, որոնք յաճախ իր հիւրասիրութիւնը եւ առատածէտնութիւնը կը վայելէին, ազդեցիկ եւ հեղինակաւոր դարձաւ. թրքապետներու իշխանութիւնները կը ճանչնային անոր վարկի ու ազդեցութիւնը: Իր այդ կապերուն շնորհիւ Եղիա քեհիա օգտակար կ'ըլլար ժողովուրդին: Մահացաւ խոր ծերութեան մէջ, մօտաւորապէս 120 տարեկանին, Ի. դարուն սկիզբը:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԳԱՊԵՏ ԲԱՐԱՂԱՄԵԱՆ

Յովհաննէս վարդապետ Բարաղամեան ծնած է ժԹ. դարուն սկիզբը, Թոմարգայի Հայեկ թաղը: Ծննդավայրին Ս. Աստուածածին վանքին մէջ ուսում ստացաւ եւ կուսակրօն հոգեւորական ձեռնադրուեցաւ:

Յովհաննէս վարդապետ 1860ին վանքին տեսուչ ընտրուեցաւ՝ յաջորդելով Սարգիս վարդապետին: Ան փնտրեց վանքին ու միաբանութեան խաղաղ ու հանդարտ գոյակիճակը պահել եւ իր բարեճամբոր բնաւորութեան շնորհիւ սիրովորէն ու միաբանութեան: 1887ին քաղաքեաց տեսութեանն էր վարձանեցաւ 1888ին ու թաղուեցաւ վանքին միաբանութեան գերեզմանատան մէջ:

ԹԵՄԻՒՐԵԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐ

Թոմարգայի Վերի թաղի խորասանեաններէն ճիւղաւորուած Բարաղամեանները, իրենց կարգին ճիւղաւորուելով՝ կազմած էին Թեմիւրեան ընտանիքը, որ ժԹ. դարու կէսերուն իր կարգին քաղաքում գերդաստան դարձաւ: Թեմիւրեանները Թոմարգայի Վերի թաղին ու Նիրզէի մէջ կեդրոնացած էին եւ ճանչցուած՝ իրրեւ վարպետ երկաթագործներ եւ դանակագործներ:

Թեմիւրեան վարպետներէն իրրեւ երկաթագործ նշանաւոր դարձաւ Մկրտ խալֆա Թեմիւրեան: Ծնած՝ Նիրզէ, երկաթագործութեան արհեստին տիրապետելէ ետք ան երիտասարդութեան վերադարձաւ իր նախնեաց օրրան Թոմարգա եւ հոն գործատեղի բացաւ՝ աշխատանքներու ու սուսաւորութեան համար:



Թոմարգայի Ս. Աստուածածին վանքին Ս. Խաչ տաճարը, որուն շրջափակին մէջ խմբուած են ուխտաւորներ:



Թոմարգայի Ս. Աստուածածին վանքին Ս. Խաչ տաճարին խաչկալը եւ ներքին տեսքը. գործ՝ Միմոն խալֆա Խորասանեանի:

թիւնը կ'ըսէ, որ անոնք քանի մը եղբայրներ էին, իրենց ընտանիքներով, որոնք Պարսկաստանի խորերէն ճամբայ ելլելով եւ ամիսներ տեւող ճամբորդութենէ մը ետք հասան Փոքր Ասիոյ կեդրոնական լեռները. անոնց մէկ մասը Կեսարիոյ մէջ տեղաւորուեցաւ, իսկ մնացեալները ուղղուեցան աւելի հարաւ եւ Թոմարգայի մէջ բնակութիւն հաստատեցին:

Հետագրքական է նշել, որ այս նոյն ժամանակներուն խորասանէն գաղթելով Կեսարիոյ կողմերը, Արգէտս լեռան շրջակայքը հաստատուեցան արիական հին ծագումով եւ թափարիտանցիներու սերունդ նկատուող գազա կարգ մը ցեղախումբերու նախնիներ, որոնք յետոյ գլխաւորաբար Տերսիմի լեռներուն վրայ տեղաւորուեցան: Անոնք արեւակցական կապերով ու հաւատալիքներով շատ մօտիկ եղած են հայերուն:

ԽՈՐԱՍԱՆԵԱՆՆԵՐԸ՝ ՄԵԾ ԵՒ ԲԱԶՄԱՃԻՒՂ ՏՈՒՄ

Թոմարգայի եւ Կեսարիոյ մէջ կեդրոնանալով՝ խորասանէն գաղթած դերդաստանը այնուհետեւ խորասանեան ազգանունով ճանչցուեցաւ: Անոնք այնուհետեւ Թոմարգայի դիրքը, զայն շրջապատող եւ մարգագետիններով ծածկուած ընդարձակ դաշտին երկրագործական ու անասնապահական կարելիութիւնները, չոր եւ բարեխառն, առողջարար օդը եւ պատուական ջուրը նկատի ունենալով գլխաւորաբար հոն կեդրոնացան եւ աւանին հարաւային, Սիմակի լեռան լանջին, առատահոս ջուրերով ու ակերով Հայեկ թաղին մէջ տեղաւորուեցան. հոն, ուր կը գտնուէր պատմական Հայեկ բերդը: Անոնք կալուածներ ձեռք ձգեցին եւ հողը մշակելով բարեկեցիկ դարձան:

Խորասանեաններուն մէկ մասը այնուհետեւ Թոմարգայի Վերի թաղին մէջ բնակութիւն հաստատեց: Անոնք, Էվերէկի ճամբուն վրայ գտնուելով, առեւտրական յարաբերութեան մէջ մտան քաղաքին հետ եւ սկսան առեւտուրով ու արհեստներով զբաղուի: Հոն հաստատուած խորասանեանները ճիւղաւորուելով՝ Բարաղամեան, Թեմիւրեան, Իպիլեան եւ Թիւֆէնքեան ազգանուններով ճանչցուեցան:

Խորասանեաններուն մէկ ճիւղը հետագային Հայաստանեան ազգանունը առաւ. նահապետներէն իշխուած են Գրիգոր եւ Թոււմ Հայտարեաններ. ծնած՝ 1770ական տարիներուն, անոնք իրենց զաւակներով, թոռներով ու ծոռներով քաղաքում գերդաստան կազմեցին: Երկու նահապետներն ալ ապրեցան մինչեւ խոր ծերութիւն, 130 - 135 տարեկան եւ մահացան Ի. դարուն սկիզբը: Գրիգորի զաւակն էր Պալը Տայի, որ իր կարգին քաղաքում գերդաստան կազմեց:

Հետագային, մասնաւանդեբր ազգանունի

տանքի հրաւիրելով համագիւղացի աշակերտներ: Գործատան մէջ կը պատրաստուէին պատուհանի երկաթներ, պատշգամներու եւ վանդակապատներու երկաթէ ձողեր, խաչերկաթներ, կղպանքի տեսակներ, դանակ, մկրատ, երկրագործական գործիքներ՝ խոփ, ուրբազ, կացին, թի, մանգաղ, սալի անիւներ, կալի ու կամի վերաբերեալ երկաթէ գործիքներ, քարկոփներու գործիքներ, մուրճի տեսակներ եւ այլն, որոնք լայն սպառում ունէին Թոմարգայի, Էվերէկի, Ֆենեսէի, Կեսարիոյ եւ շրջակայ գաւառներուն մէջ:

Մկրտ խալֆա, որ աւելի ծանօթ էր նաեւ Թեմիւր խալֆա անունով, ճանչցուած էր իրրեւ պարկեշտ վարպետ եւ մեծ յարգանք կը վայելէր գիւղացիներուն, Կեսարիոյ ու Էվերէկի թուրք պղաններուն եւ չերքէզ բէկերուն մօտ: Ան զոհ գնաց 1915ի Մեծ Եղեռնին:

Իրրեւ արուեստագէտ ատաղձագործ՝ Թեմիւրեաններէն անուանի դարձաւ Մելքոն խալֆա. երիտասարդութեան ան մեկնեցաւ Պոլիս, ուր մնաց երկար տարիներ եւ տիրացաւ ատաղձագործութեան արհեստին:

Վերադառնալով ծննդավայր Թոմարգայի ան իր արհեստը սկսաւ կիրարկել արուեստագէտի հմուտութեամբ եւ համբաւաւոր դարձաւ իրրեւ մարդը Կեսարիոյ շրջանին ամէնէն վարպետ ատաղձագործը: Կեսարիոյ եւ շրջակայքի եկեղեցիներուն համար ան սրբատաշ տախտակէ խաչկալներ շինած է, որոնց թեւերն ու ուսերը զարդարած է նուրբ քանդակներով վարդեր ու ծաղիկներ եւ թեւաւոր հրեշտակներ, իսկ զազաթի թողորածեւ մասը եզերած է սպաքածեւ ճաճանչներով:

Կեսարիոյ, Էվերէկի եւ շրջակայքի հայ եւ Թուրք հարուստներ, աղաներ եւ կառավարա-



Թոմարգա

կան մարդիկ իրենց պալատներու կամ ապարաններու ու առատաղներուն քանդակարար կառուցումները իրեն կը վստահէին: Մելքոն խալֆա առատաղին կեդրոնական մասին մէջ կը քանդակէր ցցուն արծիւ մը, իր ճանկերուն մէջ սեղմած է նապաստակ մը եւ թեւատարած կը սաւառնի: Ինք կառուցած է նաեւ Կեսարիոյ Ս. Կարապետ վանքի վարժարանին գեղեցիկարար առատաղը՝ առաջնորդ Տրդատ եպիսկոպոս Պալեանի յատուկ գնահատանքին արժանանալով: Մելքոն խալֆա եւս զոհ գնաց 1915ի Մեծ Եղեռնին:

ԱՍՊԵՏ ՄԱՆԾԻԿԵԱՆ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթացիկ գրով (հաստատութեան պարագային)՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատում» ներկայացնել «Ազգակ»ի ծանուցումները գրասենյակը:

ԹՈՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՁ

Շարունակուած՝ 6րդ էջէն

գետնի վրայ անջրպետային մարզի մէջ մրցու- նակ դառնալ, անջրպետի մասին տեղեկութիւն- ներ տալ հանրութեան, արհեստագիտական են- թակառոյց մը պատրաստել եւ համադրել քաղա- քային, գինեւորական ու առեւտրական հիմ- նարկները: Ան աւելցուց, թէ հիմնարկը օգտա- կար պիտի դառնայ Թուրքիոյ զարգացումին եւ իր ներդրումը պիտի ունենայ ազգային ապա- հովութեան մարզին մէջ:

ԹՈՒՐՔԻԱ ՄՏԱՀՈՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹԵԱՄԲ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարու- թիւնը վերջերս հաղորդագրութեամբ մը Օգոս- տոս 23ին Ռուսիոյ կողմէ վրացական տարածք- ներու ռմբակոծման պատճառով շրջանին մէջ անկայուն վիճակի մը հաւանական տեղծումին նկատմամբ մտահոգութիւն յայտնած է:

«Որ ցաւով տեղեկացած ենք, թէ ռմբակո- ծումին պատճառով բազմաթիւ վրացիներ սպաննուած են: Թուրքիա շատ մեծ կարեւորու- թիւն կու տայ վրացական կայունութեան եւ անվտանգութեան: Ամէն մարդ գիտէ, որ կող- կասի կայունութիւնը եւ բարօրութիւնը Թուր- քիոյ համար շատ կարեւոր են», յայտնած է նա- խարարութիւնը հաղորդագրութեան մէջ:

ԹՈՒՐՔԻՈՅ ՊԱՏՃԱՌՈՎ 12 ՀԱՅԱՐ ՆԱԽՅԵՏԵԱՆՅԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՂՈՒՐԿ ՊԻՏԻ ԳԱՆՆԱՆ

«Թուրքիա» լրատու գործակալութիւնը կը տե- ղեկացնէ, թէ վերջերս Թուրքիա արգելած է Թուրքիա - Նախիջեւան սահմանին վրայ քարի- ղի առեւտուր կատարել: Մտաւորապէս 12 հա- զար նախիջեւանցիներ կը գրադին քարիւղի առեւտուրով: Անոնք քարիւղը կը գնեն Նախի- ջեւան - Իրան սահմանէն եւ կը ծախեն Նախի- ջեւան - Թուրքիա սահմանին վրայ: Թուրքիոյ պետական նախարար Ռամազան Միրզաօղլու այս առիթով ըսած է, թէ տարեկան 15 հազար թոն քարիւղ կը մտնէ Թուրքիա: Ան աւելցու- ցած է, թէ իր երկիրը որոշած է քարիւղի մաք- սաննեցութեան դէմ պայքարել:

ՍԵՁԷՐ ԿԸ ԳԱՏԱՊԱՐՏԵ ՔԱՐՁԱՅԻ ԳԵՄ ՄԱՀԱՓՈՐՉԸ

Ըստ «Թրքիշ Տէլի Նիւզ»-ի, Թուրքիոյ նա- խագահ Ահմէթ Նեմետթ Սեզըր վերջերս նամակ մը յղած է Աֆղանիստանի նախագահ Համիդ Բարզային եւ դատապարտած է անոր դէմ մա- հափորձը: Նամակին մէջ Սեզըր ուրախութիւն յայտնած է, որ Բարզայ փրկուած է մահափոր- ձէն: Ան նաեւ յոյս յայտնած է, որ մահափորձը կատարողները շուտով կը ձերբակալուին:

Սեզըր աւելցուցած է, թէ Թուրքիա կարեւոր կը նկատէ եւ զօրավիգ կը կանգնի Աֆղանիս- տանի մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատմանը:

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԿԱՍ Կ'ԸՆԵՆ ՓՈԼԻԿԼՕԹ

ԲՈՒՆԻ ԵՐԶԱՆԱԽԱՐՏՆԵՐԸ

«...Աւարտել ենք Փոլիկլօթի «Ինթրիթը Տիպայն»-ի դասընթացը, ընդունուեցայ Բանատայի «Սըհլ» հա- մալսարանը: Այժմ, կը պաշտօնավարեմ մեծ ընկերու- թեան մը մէջ, Սոնրալ: Ընդհանրապէս Փոլիկլօ- թի...»:

ՇԱՆԹԱԼ ՍԱՅԷԼ

www.hamazkayin.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամացիներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Table with 2 columns: Currency/Item and Price. Includes items like US Dollar, Euro, etc.

Table with 2 columns: Item and Price. Includes items like Gold, Silver, etc.

Table with 2 columns: Item and Price. Includes items like Wheat, etc.

Table with 2 columns: Item and Price. Includes items like Oil, etc.

Table with 2 columns: Item and Price. Includes items like Gold, etc.

Table with 2 columns: Item and Price. Includes items like Silver, etc.

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՏՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ / ԶՐՕՍԱՇՐՁՈՒԹԻՒՆ

ԳԱՐԵՉՈՒՐԻ ՓԱՌՔԸ ՀԻՒՍՈՂ ԵՐԵԿՈՆԵՐ

Գարեջուրի սիրահարները ասկէ ետք պէտք չունին այս գովազտող խմիչքին հայր- ենիքը նկատու- րդ Գերմա- նիա երթա- լու' մասնակցե- լու համար գա- ր է ջ ո ը ի ի ն ո ի ի ռ ո յ ա ժ փառատօներու եւ երեկոնե- ռու: Սեպտեմ- բեր 6-15 Լիբ- անի մէջ տեղի պիտի ունենայ գ ա ռ է ջ ո ը ի փառատօն մը, որ անկասկած պիտի ուրա- խացնէ այս խմիչքին բոլոր սիրահարնե- րը: «Շթումֆ» հաստատու- թեան կողմէ յաջորդաբար տ ա ս ն մ է կ ե- ռ ը ղ տարին ըլլալով կապ- մակերպուող այս փառատօնին հիմնական նպա- տակն է «Գաւաթ մը գարեջուրի ջուրը կրնաս հանդիպիլ ամէնէն լաւ մար- դոց» կարգախօսին ջուրը հաւաքել Լի- բանի մէջ գարե- ջուր «պաշտող»ները եւ անոնց պարգեւել հաճելի ու հե- տաքրքրական երե- կոյ մը:



Գարեջուրի փառատօնին որմազը

Սուաջին քանի մը փառատօններուն մեծ յաջողութենէն խանդա- վատ՝ «Շթումֆ» ճաշա- րանը կը շարունակէ կազմակերպել տարբե- կան աւանդութեան վե- րածուած իր նախա- ձեռնութիւնը: Տար օր- շարունակ, երեկոյեան ժամը 7:00էն մինչեւ գի- շերուան ժամը 12:30, տեղի պիտի ունենան գարեջուրի փառքն ու փառատօնային գո- վերգող երեկոներ, որոնց ընթացքին սո- վորական կերուխու- ու խմբային այլա- պան խաղեր: Նշենք, որ խաղերուն ըն- թացքին յաղթողնե- րը պիտի ստանան նուէրներ:

մին, նուագա- խումբերուն, երգիչներուն եւ պարերուն պիտի ընկե- րանան հե- տաքրքրական խաղեր: Ներ- կա ն ե ռ ո յ տրամադրու- թեան տակ պի- տի գտնուին գ ա ռ է ջ ո ը ի երեսուն տե- սակներ: Իսկ խաղերու շար- քին են գարե- ջուրի մարա- թոնը, որուն մասնակցողը մէկ վայրկեա- նի մէջ առաւե- յագոյն չափով ստրճի գաւա- թով... գարե- ջուր պիտի խմէ, նստե գա- տարներու հե- տաքրքրական դասախոյուն- ներով գարե- ջուր խմելու մրցուններ եւ անհատական ու խմբային այլա- պան խաղեր: Նշենք, որ խաղերուն ըն- թացքին յաղթողնե- րը պիտի ստանան նուէրներ:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5245 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱՋԱՐԵԱՆ

11x11 grid for a crossword puzzle.

- 1. Կուպի - 1982ի լաւագոյն ժապաւէնի Օսքարին տիրացած ֆիլմը:
2. Հայ նահապետ - Մեղկ:
3. Եւրոպական ինքնաշարժի մականիշ - Յուլ- ցական ածական:
4. Նեղ ու մուտք փողոց - Վշտանալ:
5. Արական օտար անուն - Մոհամէտի փե- սան:
6. Ակնածութիւն:
7. Կրակ - Ռամկորէն' ալո՛ - Համադասական շողկապ:
8. Ձայնանիշ - Պոլսա- հայ մեծահարուստի տրուած տիտղոս:
9. Վահան Տէրեանի երկերէն - Ստացական ածական:
10. Իգական անուն - Լեցուն:
11. Պայթեան մայրա- քաղաք - Ներսի:

11x11 grid for a crossword puzzle.

ՏԻՆՆԻ ԿՐԱՆԻ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
Ուրախ էք ձեր կենքին և նոր ուղղութեան համար: Անշուշտ ամէն ինչ վարդագոյն չէ, բայց վստահ էք, թէ ապահով է ձեր ճամբան:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Ձեզի համար դժուար պիտի ըլլայ այսօր ձեր նպա- տակը հասկնալ ձեր շուրջիններուն: Անոնք ճիշդ կերպով պիտի չմեկնաբանեն ձեր ծրագիրը:

ԵՐԿՈՒՆԻՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
Ձեր եռանդը եւ ուժակները ճիշդ նախագծով պիտի գրգռէ: Շարունակեցէք հոգ տանիլ ձեր սնունդին եւ սահման մը դրէք ձեր աւելորդ յոգնութեան:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
Եթէ զաւակներ ունիք, ձեր օրը պիտի անցնի անոնց քով, ինչ որ ուրախութիւն պիտի պատճառէ ձեզի: Ընկերային գետնի վրայ ունիք յաջողութիւն:

ԱՌԻՒԹ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Հաւանական է տնային պիտոյներու կամ մեքե- ցական գործիքներով ստեղծուած արկած մը: Ուշա- դիր եղէք աշխատանքի պահուն:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Այսօր ձեր կազմակերպչական ոգին զօրաւոր պի- տի ըլլայ: Ունիք աշխատանքի նոր յոյսեր մը, ապագայ վերամուտին համար օգտակար նախաձե- ցումներ կ'ընէք:

ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Ով որ իր պարտքը կը վճարէ, կը հարստանայ: Թոյլ մի տաք, որ մարդիկ ձեզմէ պահանջեն ձեր վճարելիք գումարները: Ձեր վարկը բարձր պահե- ցէք:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Անձ մը, զոր կը կարծէիք թէ անտարբեր է ձեր նկատմամբ, այսօր պիտի արտայայտէ իր ջերմ գգա- ցումները, ու դուք պիտի մօտենաք իրեն նոյն ջեր- մութեամբ:

ԱՆԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Ձեր մարմինը բարձեւ եւ առողջ պահելու հա- մար հետեւեցէք մարզական փորձերու: Ձեր հետ տարբեր նախաձեռնում մը, եւ ձեր աշխատանքը այս մարզածէի մէջ թող ըլլայ տեսական:

ԱՅԾԵՂԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Նոր բարեկամութիւն պիտի հաստատէք կարգ մը անձերու հետ: Ձանոնք հրաւիրեցէք նախ, որպէս- զի ձեր ծանօթութիւնը խորանայ:


ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
Ձեզի պիտի առաջարկուի նոր պաշտօն մը: Թե- քեի մի առեցէք զայն, այլ լքուեցէք ընդունեցէք, որովհետեւ անկէ կ'ստեղծուի քաղաքացիական պաշտօնի բարձրացում մը:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
Ճամբորդութիւնը կը կազմաւորէ երիտասարդու- րիւնը: Այսօր կը ծրագրէք նման պտոյտ մը, մշա- կելու համար ձեր հոգեկան եւ ֆիզիքական կարո- ղութիւնները: Պիտի օգտուիք:

ՀԵՌԱՏԵՍԻԼ

Table with TV and radio program schedules. Columns include time, channel, and program name.

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն ԱՇԽԱՐՀ



ՅՈՐՄԻՒԼԱ 1

ՇՈՒՄԱԽԵՐ ՊԱՏՐԱՍ Է ՄՈՆԶԱՅԻ ԿՐԱՆ ՓՐԻՒՆ



Ասկէ տարի մը առաջ, Մոնզայի կրան փրիւն կը տիրապետէր սուգի մթնոլորտ՝ Սեպտեմբեր 11ի ահաբեկչական արարքին պատճառով: Այդ շարժումները ընդ, Շուվախըր այս կրան փրիւն համար իտալիա ժամանեց բոլորովին անտրամադիր: Աւելին՝ Շուվախըրի արամադրութիւնը բոլորովին խանգարուեցաւ, երբ լսեց, թէ իտալացի նշանաւոր վարորդ Ալեքս Զինարտի ինքնաշարժի արկածի մը պատճառով կորսնցուցած է իր երկու ոտքերը:

Այս տխուր դէպքերէն տարի մը ետք Շուվախըր կը վերադառնայ Մոնզա՝ իր հաստատած մրցանիշներուն թիւը աւելցնելու յանձնարարութեամբ, սակայն չի կրնար մոռնալ անցեալը. «Կեանքիս մէջ անմոռանալի թուական մըն էր այդ»:

Սակայն Շուվախըր, որ Մոնզա, կը հասնի այս տարեշրջանին ցարդ տեղի ունեցած 14 կրան փրիւններէն 12ը տիրողը շահած, կ'ըսէ, թէ մտադիր է իր կարելին ընելու մոռնալու համար անցեալը...

ԹԵՆԻՍ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՅԱԸԱՐՔԵՐ

ՍԱՐԳՍԵԱՆ ԱՆՑԱԻ Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

ԹԱՇԵՆԹԻ ՄՐՅԱԸԱՐՔ

Երէկ տեղի ունեցան Թաշէնթի «Փրեզիտընթս Բաֆ» մրցաշարքի Ա. հանգրուանի մրցումները: Հաստատուեց ներկայացնող Սարգիս Սարգսեան 6 - 3, եւ 7 - 6 արդիւնքով պարտութեան մատնեց գերմանացի Պիորն Ֆաուրըր եւ անցաւ Բ. հանգրուան:

Սարգիս Ա. հանգրուանի երկուսու կարեւորագոյն մրցումներուն արդիւնքները.
Թոմի Հասս (Գերմանիա) - Մարք Ռոսէ (Չեխիա) 4 - 6, 7 - 6, 6 - 3
Եւգենի Բաֆլինցով (Ռուսիա) - Ալեքսանդր Ուսաք (Գերմանիա) 6 - 7, 7 - 6, 7 - 6
Քրիսթիան Փլէյս (Դանիա) - Ռայնըր Շուվախըր (Գերմանիա) 7 - 6, 6 - 2
Սարգիս Սարգսեան (ՀԱՅԱՍՏԱՆ) - Պիորն Ֆաուրըր (Գերմանիա) 6 - 3, 7 - 6
Տաւրո Սանկուլինթի (Իտալիա) - Մակնուս Նորմըն (Նուէտ) 4 - 6, 6 - 4, 7 - 6

ՈՒՍԱՆՈՅ ԲԱՑ ՄՐՅԱԸԱՐՔ

Ռուսմանիոյ բաց մրցաշարքի Ա. հանգրուանի մրցումներուն յաղթանակներ արձանագրեցին իտալացիները (Սպանիա), Վիթթոր Հանսուրու (Ռուսմանիա), Գրիսթոֆ Ռոտըր (Պելճիքա), Անտոն Գաւէլ (Ռուսմանիա) եւ Տալիս Ֆէրրէր (Սպանիա):
Անձրեւի պատճառով Ա. հանգրուանի երեք մրցումներ յետաձգուեցան Չորեքշաբթի օրուան:

ՇԱՆԿՅԱՅԻ ՄՐՅԱԸԱՐՔ

Շանկչայի մրցաշարքի աղջկանց առաջին հանգրուանի մրցումներուն ծիրէն ներս, երէկ մրցաշարքին 4րդ դասուած Աննա Բուրնիբովա 6 - 1 եւ 6 - 4 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց աւստրալիացի Միքէլ Տիթմանի դէմ:
Իրենց մրցումները յաղթանակով աւարտեցին նաեւ թիւ 1 դասուած Աննա Սմաշնովա եւ թիւ 3 Գլարիսա Ֆերնանտէզ:

ԼՈՒՐԵՐ՝ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

● ԱՆՅԵԱԼ Երկուշաբթի, կոփամարտի Հայաստանի երիտասարդական հաւաքականը մեկնեցաւ Քուպա, ուր Սեպտեմբեր 15էն 22 տեղի պիտի ունենայ աշխարհի ախոյեանութիւնը:
Հայաստանը ներկայացնող 4 բռնցքաւարտիկներն են՝ Դանիէլ Գանիէլեան (54 քկ.), Արթուր Պերնեցեան (57 քկ.), Տիգրան Նիկողոսեան (67 քկ.) եւ Աշոտ Յակոբեան (81 քկ.): Հաւանական է նաեւ, որ Հայաստանի կապիտան միայն ֆրանսահայ

Տիգրան Չորոյեանը (61 քկ.):
● ՀԱՅԱՍՏԱՆԻ ճատրակի ֆետերապիոնը ներկայացուց անունները Հայաստանի տղոց եւ աղջկանց հաւաքականներուն, որոնք պիտի մասնակցին Սլովենիոյ մէջ տեղի ունենալիք ճատրակի Ողիմպիականներուն:
Տղոց կապիտան դասուած են՝ Վլատիմիր Յակոբեան, Սմբատ Լպուտեան, Արտաշէս Միսասեան, Աշոտ Անաստասեան, Կարէն Ասրեան եւ

ՃԱՏՐԱԿ. «ՆՈՐ ԴԱՐՈՒ ՄՐՅԱԸԱՐՔ»

ՎԼԱՏԻՄԻՐ ՅԱԿՈԲԵԱՆ ՏԱՊԱԼԵՅ ԳԱՍՊԱՐՈՎԸ

Անցեալ Կիրակի, Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին բացուած կատարեց Ռուսիոյ եւ Աշխարհի ճատրակի հաւաքականներու միջեւ մրցաշարքին:

Կրեմլինի խորհրդատու Ղովնեբու Պալատին մէջ տեղի ունեցող այս ախոյեանութեան իրենց մասնակցութիւնը կը բերեն աշխարհի ճատրակի հզօրագոյն վարպետները: Այսպէս, Ռուսիոյ հաւաքականի կազմէն ելոյթ կ'ունենան Կէրի Գասպարով, Անաթոլի Բարսիով, Վլատիմիր Բրամնիք, Ալեքսանդր Մորոզեւիչ եւ 8 այլ աշխարհահռչակ վարպետներ: Միւս կողմէ, Աշխարհի հաւաքականի 12 անդամներուն կարգին են՝ Վիշուանթեան Անանտ, Ռուսլան Փոնոմարիով, Վասիլի Իվանչուք եւ Հայաստանի ամէնէն բարձր դասուած ճատրակի վարպետ Վլատիմիր Յակոբեանը:

8 հանգրուան ետք Աշխարհի հաւաքականը 41,5-38,5 արդիւնքով չնչին առաւելութիւն մը ձեռք ձգած է Ռուսիոյ հաւաքականին վրայ: Այս գծով բանալի դեր ունեցող Վլատիմիր Յակոբեան, որ երէկ, Տրդ հանգրուանի մրցումներուն արձանագրեց մեծ



Գասպարով

անակնկալ մը՝ պարտութեան մատնելով 1985էն ի վեր աշխարհի դասուած ման բարձրագոյն դիրքին վրայ «բազմած» Կէրի Գասպարովը:
Նշենք, թէ Վլատիմիր Յակոբեան Աշխարհի հաւաքականի կազմին մէջ առնուած էր իբրեւ պահուստի մարզիկ եւ այդ իսկ պատճառով նախապէս միայն Տրդ հանգրուանին ելոյթ ունեցաւ պարտութիւն մը կրելով աշխարհի ախոյեան Վլատիմիր Բրամնիքէն:
Գասպարով կը կրէր մրցաշարքի իր երրորդեան, որ երէկ, Տրդ հանգրուանի մրցումներուն խոնարհած էր ուրբանա-

ՀԵԾԵԼԱՐՇԱԻ. ՍՊԱԼԻՈՅ ՇՐՋԱՎԱՋՔ

ՉԻՓՈԼԻՆԻ՝ Գ. ԵՒ Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐՈՒ ԱՆՈՅԵԱՆ



Չիփոլինի

Թէեւ Մարիո Չիփոլինի իր ասպարէզին ընթացքին հեծելարշաւի 40 հանգրուաններու ախոյեան Հանդիսացած է, սակայն անոնցմէ ոչ մէկը եղած է «Վուելթա» ընթացքին: Այս մէկը փոխուեցաւ Սպանիոյ շրջափակի 3րդ հանգրուանին, երբ 134 քիլոմետր տարածութիւնը ամէնէն առաջ կտորող եղաւ 35ամեայ Չիփոլինի, որ եղանակի կիսուն յայտարարած էր արհեստավարտ ասպարէզին իր հրաժարականը, սակայն աւելի ուշ յետ կոչած էր իր որոշումը եւ վերադարձած՝ մասնակցելու «Վուելթա»ին:
Այս հանգրուանին երկրորդ հանգիսացաւ Ալեսանտրո Փենաչի (Իտալիա), իսկ «Թելեքոմ»ի հեծելաները էրիք Յապլը (Գերմանիա) հանդիսացաւ երրորդը:
Չիփոլինի չբաւարարուեցաւ երկուշաբթի օրուան իր այս նուաճումով եւ գայն կրկնեց երէկ՝ չորրորդ հանգրուանին, երբ 149,5 քիլոմետր տարածութիւնը կտորեց 33 վայրկեան 32 երկվայրկեանի մէջ: Փենաչի կրկին հանդիսացաւ երկրորդ, իսկ երրորդ դիրքը բաժին ինկաւ աւստրիացի Կէրիթ Կրոմպրի:

Նշենք, թէ Սպանիոյ «Վուելթա»ն ունի 21 հանգրուաններ, որոնց ընթացքին հեծելաները պիտի կտրեն ընդամենը 3144 քիլոմետր տարածութիւն:

ՖՈՒԹՊՈԼ. ԻՏԱԼԻՈՅ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱԿՈՒՄԲԵՐԸ ԴԱՍԱԻՈՐԵՑԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՓՈՒՄԻ ԱՌՆՉՈՒՈՂ ՀԱՐՑԵՐԸ

Իտալիոյ ախոյեանութեան, կարճ՝ Քալչիոյ մրցումները պիտի սկսին Ծաբաթ օր, ինչպէս որ նախապէս յայտարարուած էր, որովհետեւ Քալչիոյ ամէնէն հարուստ 6ակումբները իտալացու են օգնել նիւթական դժուարութիւններ դիմագրաւող ակումբներու, որոնք սպառնացած էին, թէ պիտի չկատարեն Ա. հանգրուանի իրենց մրցումները՝ եթէ արքանական պատկերասփիւռի կայաններու հետ գոհացուցիչ գումարով համաձայնագիր մը չկնքեն:

Իտալիոյ ֆուտպոլի պատասխանատուները երէկ հանդիպում մը ունեցան Իտալիոյ մշակութի նախարարին հետ, որմէ ետք պիտի տեսնուին իրենց պայմանագրի սպառնացող ակումբները յետ կոչեցին իրենց սպառնալիքը:

Փոխարէնը, Իտալիոյ ֆուտպոլի ֆետերասիոնի նախագահը յայտնեց, թէ Ա. Սէ. Միլան, Եուվեթուս, Ինթեր, Ռոմա, Լացիո եւ Փարմա պատրաստակամութիւն ունենան իրենց պատկերասփիւռի կայաններէ իրենցմէ շատ աւելի նուազ վճարումներ ստացող ակումբներուն նիւթական օժանդակութիւն յատկացնել:

Ըստ կարգ մը տեղեկութիւններու, վերոնշեալ վեց ակումբներէն իտալացիները շուրջ վեց միլիոն էուրոյի յատկացում մը պիտի կատարէ «դժգոհ» ակումբներուն:

Նշենք, թէ Իտալիոյ ախոյեանութիւնը, որ պիտի սկսէր Սեպտեմբեր 1ին, պիտի սկսի յառաջիկայ Ծաբաթ օր:

ՖՈՒԹՊՈԼ

ՓՈԼ ԿԷՍՔՈՅՆ ԴԷՊԻ ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱՊ

Բրիտանիոյ նախկին աստղերէն՝ Փոլ Կէսքոյն իր ասպարէզը վերընձեռելու վերջին փորձով մը պիտի ուղղուի Նոր Զելանտա, ստորագրելու համար Աւստրալիոյ Ա. դասակարգի Օբլանտ Բիւնկ խումբին տոմարներուն վրայ:
Թէեւ Անգլիոյ մէջ քանի մը ակումբներ թոթեմհամի եւ Լացիոյի նախկին աստղ Կէսքոյնի առաջարկներ ներկայացուցած են, սակայն ան յայտնած է, թէ արդէն որոշած է մաս կազմել վերոյիշեալ ակումբին:

ՊԱՂՏԱՏ ԿՈՉ Կ ՈՒՂՂԷ ԱՐԱՔՆԵՐՈՒՆ...

Շարունակուած Ա. ԷջԵՂ

Ընդհանուր ժողովի դիմաց արտասանելիք ճառը, որուն առանցքը պիտի կազմէ իրաքն ու խոր ներկայացուցած սպառնալիքը: Ճիշդըր ըսաւ նաեւ, որ միջազգային ընտանիքը սկսած է հետաքրքրուիլ Ուաշինկթընի պաշտպանած թեզով եւ կը նախատեսուի, որ ճնշում բանեցուցի գործադրութեան դնելու համար իրաքի գծով ՄԱԿի որդեգրած կարգ մը որոշումները: Բաները աւելցուց, որ իրաքի հանդէպ Ուաշինկթընի որդեգրած կեցուածքը անպայման զինուորական գործողութիւն մը չ'ենթադրելու:

Հին եւ Մէլուտական Արաբիոյ զահաժառանգ իշխան Ապտալլայի, ՕՍԹԻՆԻ ընդհանուր քարտուղար Նաւիէ Սոյանայի եւ Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբի հետ:
Միւս կողմէ, Եւրոպական Միութեան արտաքին հարցերու յանձնարար Կարոս Փաթրըն կոչուող Ուաշինկթընի ՄԱԿի ճամբով լայն դաշնակցութիւն մը ապահովելու: Փաթրըն զգուշացուց Միացեալ Նահանգները - Եւրոպա տարակարծութիւններէ: Ան ըսաւ, որ յառաջիկայ ամիսներուն փորձաքարի պիտի գարնուին ամերիկեաներու պայմանը, յատկապէս՝ իրաքի հարցով: Փաթրըն հերքեց, թէ Եւրոպայի եւ Միացեալ Նահանգներու միջեւ վիճակը խորանայ:

Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Տիգ Զէյնի ըսաւ, որ գրեթէ անկարելի պիտի ըլլայ համաշխարհային դաշնակցութիւն մը ունենալ, եթէ Մատտած Հիւսէյն տիրանայ կորիզային զէնքերու: Չէյնի աւելցուց, որ ժամանակը ի նպաստ Ուաշինկթընի չէ, երբ հարցը կ'առնչուի Մատտածի զէնքերու ծրագրերին: Ան դիտել տուաւ, որ եթէ իրաքի նախագահը կորիզային զէնքեր ձեռք ձգէ, անկարելի պիտի ըլլայ միջազգային դաշնակցութիւն մը գոյացնել:

Պուշ, որ թափ կու տայ դիւանագիտական ճիգերուն՝ իրաքի դէմ միջազգային ճակատ մը կազմելու համար, Երկուշաբթի երկուշաբթի հեռաձայնային հաղորդակցութիւն ընդհանուր ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի, Եւրոպական Միութեան բարձրաստիճան պաշտօնատարներու, թուրքիոյ նախագահ

սենտիքաներու տարեկան խորհրդաժողովին, Մատտած Հիւսէյնը ներկայացուց իբրեւ միջազգային անօրէն ու ոճրագործ մը: Ան աւելցուց, որ ամբողջ աշխարհը պէտք է դէմ կանգնի Պաշտպանութեան հասնող սպառնալիքին, որ ուշ կամ վաղ պիտի կրկնուի իրենց անպատիժ պիտի չ'մնայ:

Պէլքը, որ ամբողջական զօրակցութիւն յայտնած է Պուշի, խստիւ կը քննադատուի Բրիտանիոյ մէջ, ուր մեծամասնութիւնը զէնքեր է վարչապետին կեցուածքին: Աշխատաւորական համադաշնակցութեան կը քննադատեն Պէլքը ու կը մերժեն իրաքի դէմ զինուորական գործողութիւն մը: Իր խօսքին մէջ Պէլքը փորձեց վերստին սիրաշահիլ անոնց զօրակցութիւնը:

ՊԼԵՐ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ, ԻՐԱՔԸ

Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պէլքը զգուշացուց իրաքը, դիտել տալով, թէ անոր դէմ միջոցառում մը պիտի որդեգրուի, եթէ անտեսել սպառնալիքները պահանջներու վերադարձը:
Պէլքը, որ կը խօսէր աշխատաւորական համադաշնակցութիւններու եւ

ՃԵՏՈՒՄԻ ԾՆԱՆՃԱՆՈՒՄԻ

Պէլքը, որ ամբողջական զօրակցութիւն յայտնած է Պուշի, խստիւ կը քննադատուի Բրիտանիոյ մէջ, ուր մեծամասնութիւնը զէնքեր է վարչապետին կեցուածքին: Աշխատաւորական համադաշնակցութեան կը քննադատեն Պէլքը ու կը մերժեն իրաքի դէմ զինուորական գործողութիւն մը: Իր խօսքին մէջ Պէլքը փորձեց վերստին սիրաշահիլ անոնց զօրակցութիւնը:
● ՃԵՏՈՒՄԻ Կարգապետ Ճոնսիքիւրը Բրիտանիոյ ըսաւ, որ Միացեալ Նահանգները պէտք է միջազգային ընտանիքը համոզեն, որ իրաքի դէմ զինուորական գործողութիւն մը անհրաժեշտ է:

ՉՈՒԻՑԵՐԻԱ ՀԱՆԴԻՍԱՅԱԻ ՄԱԿԻ 190Դ ԱՆԴԱՄԸ

Չուիցերիա երկի պատմական իրագործում մը կատարեց, երբ մուտք գործեց ՄԱԿի շարքերէն ներս եւ դարձաւ անոր 190րդ անդամը: Այսպէսով, Չուիցերիոյ երկար տարիներու հռչակաւոր անդամական «չէպոքուրթիւն»ը վերջ գտաւ եւ անոր հանրածանօթ դրօշակը կարմիր, որուն կեդրոնը՝ ձերմակ խաչ, ծածանեցաւ ՄԱԿի Նիւ Եորքի կեդրոնատեղիին առջեւ, պաշտօնական արարողութեան մը ընթացքին, ներկայութեամբ Չուիցերիոյ նախագահ Գասպար Վիլիկըրի եւ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոնֆի Անանի:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԳԵՐՄԱՆԻԱ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ «ՔԱՅԻՏԱ»Ի ՀԵՏ ՈՐԵԻԷ ԱՌՆՉՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑԱԾ ԱՆՁԵՐՈՒ

ՊԵՐԼԻՆ, 10 (ՌՈՅԹԸՐԸ).- Գերմանիոյ ոստիկանութիւնը Երեքշաբթի օր խուլարկած է ծագումով սուրիացիի մը պատկանող հիւսուածեղէնի ընկերութեան մը մթերանոցները, այն կասկածով, թէ ան կապեր ունի Սեպտեմբեր 11ի դար կայմակերպած անձերուն հետ:

Հաղորդագրութեան մը մէջ դատախապներ յայտնած են, թէ կ'ենթադրուի, որ կասկածելիները առեւտրական ընկերութեան ծածկը օգտագործած են «ստեղծելու համար ոճրային իմբակ մը՝ երկիր մտնելու իսլամական արմատականներ» ու այդ ձեւով մասնակից դառնալով արմատական քրիտ իսլամականներու «սրբապան պատերապմ»ին:

Ոստիկաններու կողմէ յարձակումը նորագոյն էր Գերմանիոյ մէջ վերջերս տեղի ունեցած շարք մը ապահովութեան ահապանգներու եւ ձերբակալութիւններու: Սեպտեմբեր 11ի յարձակումներու տարեդարձին նախօրեակին:

Պաշտօնատարներու համաձայն, նշեալ ընկերութեան տնօրէն Ապտիլ Մաթին Թաթարի շուրջ քննութիւն քացուած է, ինչպէս նաեւ ոստիկաններ սերտօրէն կը հետեւին սուրիական ծագումով Մամուհ Տարքապալիի, որ Համպուրկ կը բնակի եւ կրնայ կապեր ունեցած ըլլալ «Քայիտա»ի հետ:

ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՔՆՆԱԴԱՍՏ ...

Շարունակուած Ա. Էջէն

առաւ նաեւ Եւրոպական խորհրդարանին մէջ Հաստատան պատուիրակութեան ղեկավար Յովհաննէս Յովհաննիսեան, որ ճիշդ չնկատեց տազնապի բանակցային գործընթացին մէջ Լեռնային Ղարաբաղը կողմ չնկատելու միջազգային ընտանիքին դիրքորոշումը: Ան նաեւ քննադատեց Լեռնային Ղարաբաղի ընտրութիւններուն առնչութեամբ Եւրոպական Միութեան կողմ յայտարարութիւնը:

Եւրոպական Միութիւն - Հայաստան խորհրդարանական համագործակցութեան յանձնաժողովի չորրորդ նիստի քննարկումները աւարտեցան երկու կողմերուն միջեւ յարաբերութիւններու աշխուժացման մասին յայտարարութիւններու եւ առաջարկներու նախագիծի մը որդեգրմամբ:

Երեւանի մէջ մամուլի ասուլիսի մը ընթացքին, Եւրոպական Միութեան պատուիրակութեան ղեկավար Ուրսուլա Շլայխեր պատասխանելով Թուրքիոյ կողմէ Հայաստանի շրջափակման վերացման եւ Հայկական Յեղասպանութեան ճանաչման մասին լրագրողի մը հարցումին, ըսաւ. «Թուրքիա դիմում ներկայացուցած է Եւրոպական Միութեան անդամակցութեան, սակայն տակաւին բանակցային ոչ մէկ գործընթաց սկսած է, եւ այդ մէկը կախեալ է Թուրքիայէն. իսկ երբ սկսին այդ բանակցութիւնները, բնականաբար պիտի քննարկուին այնպիսի խնդիրներ, որոնք իրենց լուծումը պէտք է գտնեն»:

Եւրոպական Միութեան պատուիրակութիւնը նաեւ հանդիպում ունեցաւ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի հետ:



ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՅԵՏԱԶԳԵՑ ԱՐԱՖԱԹԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՆՈՐ ԴԱՎԼԻՃԻՆ ՎՍՏԱՆՈՒԹԵԱՆ ԲՈՒԷՆ

Պ ա ղ Ե ս տ ի ն Ե ա ն խորհրդարանը երէկ յետաձգեց նախագահ Եսաէր Արաֆաթի առաջարկած նոր դաժնի լիճին վստահութեան քուէն: Արաֆաթ կառավարութիւնը փոփոխութիւններու ենթարկած էր Յունիսին՝ ներքին ու արտաքին ճնշումներու ենթարկուելով:

Պ ա ղ Ե ս տ ի ն Ե ա ն օրէնսդիր խորհուրդին նիստէն առաջ, երեսփոխաններէն շատեր քննադատած էին Արաֆաթի նոր կառավարութեան կազմը, դիտել տալով, որ փոփոխութիւնները մակերեսային են: Ժամանակակից իշխանութեան նախագահ Եսաէր Արաֆաթի համար, որ կը փորձէ իշխանութեան սահմանները պահել, հակառակ անոր որ Բարայէլ եւ Միացեալ Նահանգներ կը փորձեն զինքնիշխանութիւնը ստեղծելու: Եսաէր Արաֆաթի Երկու-շաբթի օրուան ճառը խորհրդարանին դիմաց մեծ խանդավառութիւն չստեղծեց ոչ պաղեստինեան, ոչ ալ իսրայէլեան շրջանակներու մէջ, հակառակ անոր որ պաղեստինցի ղեկավարը դատապարտած էր Բարայէլի ղեմ գործուող յարձակումները:

Սախապի Ահմէտ Քոբէյ

ԵԳԻՊՏՈՍ
51
ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԿԸ ԴՍԱՊԱՐՏՈՒԻՆ

Գ Ա Հ Ի Բ Ի, 10 (ՌՈՅԹԸՐԸ).- Եգիպտական գիտնորակները ատեն մը բանտարկութեան դատապարտեց 51 իսլամականներ, որոնք ամբաստանուած էին հանրածանօթ պետական անձնաւորութիւններու եւ ապահովութեան ուժերու պատասխանատուներու ղեմ դաւելու եւ անոնց սպանութիւնը ծրագրելու յանցանքով:

Ամբաստանեալները ձերբակալուած էին անցեալ տարի՝ իսլամական բոլոր շարժումները արգիլող օրէնքի մը լոյսին տակ: Զինուորական ատենը ազատ արձակեց այլ ամբաստանեալներ, որոնք ձերբակալուած էին նոյն յանցանքին համար: Բանտարկութեան վճիռները կը տարուբերէին քանի մը ամիսէն 15 տարուան միջեւ:

Պաշտպան փաստաբաններ յայտնեցին, որ ամբաստանեալներուն կարգին են չորս եգիպտացիներ, որոնք ամերիկեան, հոլանտական եւ քանադական անցագրիներ կը կրեն: Մարդկային իրաւանց պաշտպան շարժումներ կ'ըսեն, որ եգիպտոս գիտնորակներու ատեններուն կը դիմէ, որովհետեւ վստահ չէ, թէ իր ցանկացած վճիռները պիտի կարենայ ունենալ քաղաքային դատարաններուն մէջ:

յայտարարեց, որ յաջորդ նիստը տեղի պիտի ունենայ այսօր: Ան աւելցուց, որ խորհրդարանին մէկ յանձնարարութիւնը այսօրուան նիստին որոշում պիտի տայ վստահութեան քուէին մասին: Յանձնարարութիւնը պիտի որոշէ, թէ քուէարկութիւնը պիտի ըլլայ ամբողջ կառավարութեան, թէ՛ իւրաքանչիւր նոր նախարարի: Կարգ մը երեսփոխաններ կը նախատեսեն, որ դժուար պիտի ըլլայ վաւերացումը ամբողջ կազմին: Վստահութեան քուէին կորուստը ծանր հարուած մը պիտի ըլլայ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաէր Արաֆաթի համար, որ կը փորձէ իշխանութեան սահմանները պահել, հակառակ անոր որ Բարայէլ եւ Միացեալ Նահանգներ կը փորձեն զինքնիշխանութիւնը ստեղծելու: Եսաէր Արաֆաթի Երկու-շաբթի օրուան ճառը խորհրդարանին դիմաց մեծ խանդավառութիւն չստեղծեց ոչ պաղեստինեան, ոչ ալ իսրայէլեան շրջանակներու մէջ, հակառակ անոր որ պաղեստինցի ղեկավարը դատապարտած էր Բարայէլի ղեմ գործուող յարձակումները:

Միւս կողմէ, իսրայէլեան ու պաղեստինեան աղբիւրները հաստատեցին, թէ ապահովական բաժակցութիւններու ձեռնարկած են: Սակայն եր-

կու կողմերն ալ մանրամասնութիւններ չփոխանցեցին: Իսրայէլեան պատուիրակութիւնը առաջնորդեց արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէս, իսկ պաղեստինեանը՝ Մաշպ Ուրայ-քաթ:

Արաֆաթի ղեկավարած Ֆաթի շարժումի բարձրաստիճան մէկ պաշտօնատարը յայտնեց, որ Եւրոպական Միութեան կազմակերպարար միջնորդներու հետ հանդիպումներուն ընթացքին, սկզբնական համաձայնութիւն մը գոյացած է իսրայէլացի քաղաքայիններու ղեմ յարձակումներուն վերջ տալու մասին: Պաշտօնատարը աւելցուց սակայն, թէ համաձայնագիրը տակաւին սեւագիր վիճակի մէջ է եւ թէ Ֆաթի կարգ մը վերապահութիւններ ունի անոր հանդէպ:

ԹՄՐԱՅԷԼ աննախընթաց որոշում մը տուաւ Երկուշաբթի օր՝ իսրայէլեան քաղաքացիութիւնը խլելով արաբ իսրայէլացիէ մը, զոր կ'ամբաստանէ Համասի հետ գործակցելու եւ իսրայէլացիներու ղեմ անձնապահական գործողութիւններ ծրագրելու յանցանքով: Իսրայէլեան քաղաքացիութիւնը խլելով՝ Բարայէլ ճամբան կը հարթէ ամբաստանաւայր արտաքինու միջոցառումի դիմաց:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Շարունակուած Յրդ Էջէն

Կեդրոնին մէջ գումարեցին ժողով մը, որուն ընթացքին քննարկեցին երկրին ներկայ իրավիճակը. ժողովը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որ նկատել տուաւ, որ երկրին արձանագրուած յառաջիկայութիւնները իրականացան Թաէֆի համաձայնագրիին գործադրութեամբ, ինչպէս նաեւ Սուրիոյ վիճումներով: Հաղորդագրութիւնը շեշտեց նաեւ ազգային ապաստիւնները եւ խօսքի ապաստիւնը պաշտպանելու անհրաժեշտութիւնը:

ԳԱԹՈՂԻԿԻ տեղեկատուական կեդրոնը երէկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ շեշտեց, որ հարկ է դատական վճիռները յարգել, նկատել տալով, սակայն, որ պատասխանատու լրատուութեան ազատութիւնը կապուած է մարդկային ալ ազատութիւններու եւ անոր սպառնալը կը նշանակէ ժողովրդավարական կարգերու ղեմ սպառնացում: Հաղորդագրութիւնը շեշտեց նաեւ, որ պատկերասփիւռի «Էմ. Թի. Վի.» կայանին փակումը պէտք չէ դուրս բանայ անձնական կամ համայնքային հարցերու, որովհետեւ ան կը մնայ տեղեկատուութեան ազատութեան առնչուած հարց:

ՆԱԼԿԻՆ վարչապետ Ռաշիտ Սոյի երէկ կարդաց կոչ մը, որուն մէջ շեշտեց, թէ լիբանանցիներու միջեւ միասնականութեան թափ պետք է տալ, որովհետեւ միասնականութիւնը իմնական է ճակատագրական պարտականութիւն է, որ կը գերազանցէ լիբանանցիներու միջեւ վեճերը կամ հարցերը: Սոյի աւելցուց, որ Լիբանան ապառ երկիր է եւ ռեւէ պատասխանատու կամ քաղաքական ղեմը իրատեսու չէ դպչելու այդ պատուութեան:

Սոյի պահանջեց, որ «Էմ. Թի. Վի.» ի ներում շնորհուի, որպէսզի վերադառնայ սփռումներուն:

ԹՈՒՐԿԻԱ

ՊԱՅԹՈՒՅԻԿ ԲԱՆԱՎԷՏ՝ ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՋԱԿՈՂՍԵԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

ԱՆԳԱՐԱ, 10 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրքիոյ վարչապետ Պիլիք Էճեմիթ Երեքշաբթի օր պայքարած է պայքարեցիկ բանավեճ մը հանդարտեցնելու համար, մինչ անիկա կը սպառնար քանդել իր կառավարական ընկերակցութիւնը:

Էճեմիթի պահպանողական եւ աջակողմեան գործակիցներուն միջեւ բանավեճը մղձաւանջի յաւելեալ պատճառ մըն էր երկրին համար, որ Իրաքի վրայ ամերիկեան հաւանական յարձակումներու եւ տնտեսական աւելի խոր տագնապի մտավարկութիւնները կ'ապրի:

Մայր Հայրենիք Կուսակցութեան ղեկավար եւ փոխ վարչապետ Մետոք Երմայ դատապարտած է ազգայնական գործակիցներու օրինական մէկ քայլը՝ մարդկային իրաւունքներու կապուած օրէնքներու ջնջումին համար, մինչ անոց որդեգրուած են խորհրդարանին կողմէ, Եւրոպական Միութեան անդամակցութեան բանակցութեան սկսելու նպատակով:

Ան ըսած է, թէ այլեւս դժուար է կառավարութեան մէջ մնալ եւ թէ ան Չորեքշաբթի օր (այսօր) որոշում պիտի տայ իրաւունքներու գծով:

Շատեր ունին այն մտավարկութիւնը, թէ Երմայի քողարկուած սպառնալիքը՝ կառավարութիւնը վար առնելու գծով, ցուցանի է աւելի լայնածիր փորձի մը՝ Կորակցութիւն ապահովելու համար խորհրդարանական քուէարկութեամբ Նոյեմբեր 3ի ընտրութեան յետաձգումին առնչութեամբ:

Հարցախոյզներ ցոյց կու տան, որ քանի մը կուսակցութիւններ, որոնց կարգին՝ Մայր Հայրենիքը, կրնան քուէներու 10 առ հարիւրի համեմատութեան չհասնի ու յառաջիկայ խորհրդարանին մաս չկապուի:

Արդարութեան եւ Բարգաւաճման Կուսակցութիւնը (ԱԲԲ), որ բանակին եւ այլ շրջանակներու կողմէ կասկածամտութեամբ կը դիտուի՝ անոր իսլամական արմատներուն պատճառով, հարցախոյզներու մէջ բոլոր մրցակիցներէն առաջ է եւ կրնայ կապուի յառաջիկայ կառավարութիւնը:

Բանակը յստակ դարձուցած է, որ ընտրութեանց որեւէ յետաձգում Թուրքիոյ մէջ քառասյին վիճակի ստեղծում կրնայ պատճառել:

ONE SECOND IS ENOUGH... Արկածը կը Պատահի Երկուրեւեքուր Մը Մէջ...

...BUT WE USE THEM ALL. ...ԻՍԿ ՄԵՆԵ ՆԵՐԿԱՍ ԵՆԵ ԱՄԷՆ ԵՐԿԱՎԵՐԿԱՆ.

ԱՖՏԻԼ AFHIL

Աֆտիլ Էլնք, Բ. Յարկ, Գեռ. Ե. Շարք. (01) 262231-242556-242557
 Կոմ. AFED, 28me étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557